Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ, ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդհանուր ակնարկ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» թիվ ՆՀ-46-Ն հրամանագրով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվել է 2012 թվականի մայիսի 6-ին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրությունների նախապատրաստումն ու կազմակերպումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքն ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին և ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 26-ին: Օրենսգիրքը պարունակում է բազմաթիվ նովելներ, մի շարք իրավահարաբերություններ ենթարկվել են նոր կանոնակարգման: Հարկ է նկատել, որ ընտրական օրենսգրքի նախագիծն անցել է միջազգային փորձաքննություն, դրանում իրացվել են փորձագետների ներկայացրած առաջարկություններն ու կարծիքները, իսկ Եվրոպական հանձնաժողով հանուն ժողովրդավարության օրենքի միջոցով (Վենետիկի հանձնաժողով) և Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) 2011 թվականի սեպտեմբերի 29-ի ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ եզրակացության համաձայն (կարծիք N 611/2011, CDL(2011)020) ընտրական օրենսդրության բարեփոխումների արդյունքում ընդունված օրենսգիրքը գնահատվել է դրական:

Նոր ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում կազմավորվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը և թվով 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 6-Ն որոշմամբ կազմավորվել են Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվին հավասար՝ թվով 41 ընտրատարածք:

Հարկ է նկատել, որ նախորդ ընտրությունների համեմատ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների թիվը փոփոխություն չի կրել, ուստի նոր ընտրատարածքների սահմանները հիմնականում համընկնում են նախկինում սահմանված ընտրատարածքների սահմաններին, իսկ կատարված առանձին փոփոխությունները, սոսկ պայմանավորված են նոր ընտրական օրենսգրքի պահանջների կատարմամբ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակներում ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմավորվել են 1982 ընտրական տեղամասեր, նույնքան էլ տեղամասային ընտրական հանձնաժողովներ, որոնք կազմակերպել և իրականացրել են քվեարկությունը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել 9 միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, տարբեր երկրների կենտրոնական ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով 647 դիտորդներ, ինչպես նաև 54 տեղական կազմակերպությունների՝ 31.451 դիտորդներ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրության քվեարկությունը տեղի է ունեցել 2012 թվականի մայիսի 6-ին, իսկ էլեկտրոնային եղանակով արտերկրից իրականացվող քվեարկությունը կազմակերպվել է 2012 թվականի ապրիլի 27-ից Երևանի ժամանակով 08:00-ից մինչև մայիսի 1-ը ժամը 20:00-ն:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրության քվեարկության նախնական արդյունքները հրապարակվեցին 2012 թվականի մայիսի 7-ին: Մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների վերջնական արդյունքները հրապարակվել են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից 2012 թվականի մայիսի 11-ին, իսկ համամասնական ընտրակարգով ընտրությունների վերջնական արդյունքները հրապարակել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ 2012 թվականի մայիսի 13-ին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրության կազմակերպումն ու անցկացումը, խախտումների վերլուծություն

ա) Նորմատիվ որոշումների ընդունում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է ընդուներ 58 նորմատիվ որոշումներ, որոնցով առավել մանրակրկիտ կանոնակարգման էին ենթարկվելու առանձին ընտրական իրավահարաբերություններ: Նկատի ունենալով ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար ընտրական իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմատիվ դաշտին իրազեկ լինելու հրամայականը, ինչպես նաև նոր ընտրական օրենսդրության պատշաճ և ամբողջական ուսուցման կազմակերպման անհրաժեշտությունը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրական օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, ձեռնարկել է օրենսգրքով նախատեսված նորմատիվ որոշումների ընդունման գործընթացը: Համապետական ընտրության նշանակման պահին նորմատիվ որոշումների ավելի քան 95 տոկոսն արդեն իսկ ընդունվել էր Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Նշված որոշումները «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան գրանցվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից և հրապարակվել Հայաստանի Հանրապետության նորմատիվ գերատեսչական ակտերի տեղեկագրերում: Վիճարկվել է միայն մեկ նորմատիվ որոշում, այն էլ՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նորմերի սահմանադրականության համատեքստում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր որոշումները զետեղվել են հանձնաժողովի պաշտոնական կայքում, դրանք երկլեզու տարբերակով՝ հայերեն և անգլերեն տպագրվել են առանձին ժողովածուների տեսքով և տրամադրվել ընտրական հանձնաժողովների անդամներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին:

բ) Մասնագիտական դասընթացների կազմակերպում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, որոնք կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել են ընտրությունների

անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականներ»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպում և անցկացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Երևան քաղաքում և մարզերում (մարզերում՝ ըստ ընտրատարածքների)՝ տարին առնվազն մեկ անգամ, քաղաքացիների դիմումների և կուսակցությունների ներկայացրած ցուցակների հիման վրա: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա: Ստուգարքին կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք, անկախ դասընթացին մասնակցելուց: Ստուգարքն անցկացվում է համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով: Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները»:

Նշված իրավական կանոնակարգումներին համապատասխան, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ առաջադրելու համար Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները կարող էին առաջադրել միայն որակավորման վկայական ունեցող քաղաքացիներին, կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2011 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ: Նշված դասընթացներին մասնակցելու համար կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և անհատ քաղաքացիների կողմից ներկայացվել էր 48.053 հայտ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 34.931 քաղաքացիներ, որոնցից 32.046-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ: Դասընթացի բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են դասընթացների կազմակերպման վայրի և ժամի մասին, այդ տեղեկությունները զետեղվել են նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Ստուգարքներն անցկացվել են գրավոր թեստերի միջոցով և գնահատման փուլում բացառվել է սուբյեկտիվիզմով պայմանավորված ցանկացած մոտեցում, գրավոր թեստերի հարցաշարն իր ճիշտ պատասխաններով ևս զետեղված է եղել համացանցային կայքում: Դասընթացներն անցկացվել են Երևան քաղաքում և հանրապետության բոլոր քաղաքներում: Դասընթացների կազմակերպման և անցկացման, ստուգարքի հանձնման և որակավորման վկայականներ շնորհելու գործընթացը որևէ անձի կողմից չի վիճարկվել:

Չնայած այն հանգամանքին, որ դասընթացները լիարժեք ծավալով կազմակերպվել էին, այնուհանդերձ 2012 թվականի մարտ ամսին, այսինքն՝ քվեարկության օրվանից մեկ ու կես ամիս առաջ, Ազգային ժողովում խմբակցություն

ունեցող որոշ կուսակցություններ դիմել էին կենտրոնական ընտրական հանձնաժողովին նոր դասընթացներ կազմակերպելու համար, նկատի ունենալով այն հանգամանքը, որ առանձին կուսակցությունների կողմից անհնար էր նշանակումների կատարումը բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում: Տվյալ պահին առկա, մեծ աշխատանքային ծանրաբեռնվածության պայմաններում անգամ, կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպեց նոր դասընթացներ՝ հետագա ցանկացած շահարկում կանխելու նպատակով: Նշված դասընթացներին մասնակցելու համար կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել էր 5.414 հայտ, սակայն դասընթացներին մասնակցեց 1.966 քաղաքացի, որոնցից 1.828-ը դրական հանձնելով ստուգարքը՝ ստացան որակավորման վկայականներ:

Դասընթացները պատշաճ կազմակերպելու նպատակով հրատարակվել էր համապատասխան ուղեցույց և տրամադրվել դասընթացի բոլոր մասնակիցներին:

Ուսումնական դասընթացներ են կազմակերպվել և անցկացվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար: Վերջիններիս առանձին դասընթացի շրջանակներում ուսուցանվել է նաև ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները: Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո իրականացվեց նաև նշված հանձնաժողովների անդամների ուսուցումը: Նշված ուսուցման կազմակերպման համար ժամանակահատվածը խիստ սահմանափակ էր, քանզի տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են քվեարկության օրվանից 25 օր առաջ: Կազմակերպված ուսուցման ընդհանուր տևողությունը կազմեց 19 օր, իսկ ուսուցմանը մասնակցեցին տեղամասային ընտրական հանձնաժողովների շուրջ 13.000 անդամ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն տեղական հասարակական կազմակերպությունների դիտորդները ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում կարող են ներկա լինել, եթե ունեն ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական կամ ստուգարքի արդյունքով ստացել են դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական: Հասարակական կազմակերպությունների ներկայացրած ցուցակների հիման վրա 2012 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում, ավելի քան 12.000 քաղաքացիների համար կազմակերպվել են որակավորման ստուգարքներ և հանձնվել համապատասխան վկայականներ:

գ) Հանրային իրազեկում և հրապարակայնություն

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր համապետական ընտրության ժամանակ հրապարակում է ուսումնական ձեռնարկ

տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց և դիտորդների համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է 9 ուղեցույց՝ ուսումնական ձեռնարկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց և դիտորդների համար, ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթի մասին, նախընտրական քարոզչության ֆինանսավորման կարգի վերաբերյալ, էլեկտրոնային քվեարկության իրականացման կարգի և ժամկետների վերաբերյալ, ուղեցույց վատ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված ուղեցույցը հրապարակվել է նաև բրոյյան այբուբենով), ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուղեցույց: Նշված ուղեցույցներից 3-ը հրապարակվել են նաև օտարալեզու (ռուսերեն, անգերեն) տարբերակով: Հրատարակվել է 9 տեղեկատվական բնույթի պաստառ, 6 հանրային իրազեկման հոլովակ: Ընտրական գործընթացի վերաբերյալ նման ծավալով ուսումնադիդակտիկ նյութեր հրապարակվել են առաջին անգամ: Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին, մեծամասնական ընտրակարգով թեկնածուներին, դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպություններին տրամադրվել են ընտրական օրենսգրքեր, կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների ժողովածու և ուղեցույցներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որին մասնակցել են շուրջ 70 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, կազմակերպվել են բազմաթիվ ասուլիսներ, հրապարակվել են հոդվածներ և հարցազրույցներ, հեռարձակվել են հեռուստահաղորդումներ: Քվեարկության օրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի սրահում կազմակերպվել է ընտրական ամբողջ գործընթացը լուսաբանող շուրջօրյա բրիֆինգ, որին մասնակցել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցները, ինչպես նաև ընտրական գործընթացում առանձին գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ, կազմակերպվել են տեսազանգեր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների հետ: Նմանատիպ բրիֆինգի կազմակերպումը, որի նպատակն էր իրականացնել ընտրական գործընթացի լիակատար թափանցիկության և լուսաբանման ապահովումը՝ իրականացվել է առաջին անգամ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակն, ովքեր կարող են մասնակցել կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական

հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին՝ (հրապարակայնություն, թափանցիկություն) լիակատար համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին: Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփման նիստն ուղիղ եթերով հեռարձակվել է 6 հեռուստաընկերությունների կողմից:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին կարևորելով տեղեկատվության հասանելիությունը գործարկվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային նոր կայքը:

Կայքում զետեղված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը:

Կայքում ներկայացված «Տեղեկատվական կենտրոն» նոր բաժինն ի թիվս այլ տեղեկությունների, առաջին անգամ պարունակում է ամբողջական տեղեկատվություն կենտրոնական ընտրական հանձնաժողովում իրականացվող վարչական վարույթների մասին, իսկ «Նյութեր» բաժնում ներկայացված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված և ընտրական գործընթացի համար անհրաժեշտ բոլոր ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակները՝ ներբեռնման հնարավորությամբ: Կայքում, առաջին անգամ, ներբեռնման հնարավորությամբ տեղադրվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված բոլոր ձեռնարկներն ու ուղեցույցները: Կայքը պարունակում է տեղեկատվություն 2005 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող բոլոր ընտրությունների վերաբերյալ: Կայքի միջոցով հնարավոր է ծանոթանալ ընտրական հանձնաժողովների տնօրինության տակ գտնվող ողջ տեղեկատվությանը, ընտրական օրենսդրությանը, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին, ընտրական գործընթացներին վերաբերող միջոցառումներին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրված է ընտրողների ռեգիստրը՝ որոնման հնարավորությամբ:

Մշակվել և ներդրվել է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի պարզեցված տարբերակը, որը հնարավորություն է ընձեռում տեսողության հետ խնդիրներ ունեցող օգտվողներին նույնպես տեղեկատվություն ստանալ կայքից:

Իրականացվել են ծրագրային փոփոխություններ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթների պահանջներին

«Ընտրություններ» ավտոմատացված համակարգը համապատասխանեցնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան մշակված և գործարկված ծրագրային միջոցներով ապահովվեց՝

- ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների տվյալները մուտքագրելու, ըստ տարբեր տվյալների որոնելու, ֆիլտրելու, տվյալների ելքային փաստաթղթի ձևավորման (Excel-ի աղյուսակներ) հնարավորություններ և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները կայքում հրապարակելու հնարավորությունը,

- նախապատվության քվեակարգով քվեարկության իրականացման նպատակով էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորման, քվեարկության գաղտնիության ապահովման, նախապատվությամբ քվեարկելու, քվեարկության արդյունքներն ամփոփելու, արդյունքների ելքային փաստաթղթի ձևավորման հնարավորությունները,

- ըստ ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխման հնարավորությունները՝ օգտագործելով պատահականության և կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանված որակական չափանիշներին համապատասխան ընտրանքի հնարավորությունը.

- վարչական վարույթներով ծանուցումների կազմակերպումը:

Արտերկրից առցանց քվեարկության նպատակով նախագծվել, մշակվել և ներդրվել է էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգը, որն իր մեջ ընդգրկում է կոդավորման միջոցները, էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորումը, օգտվողների (առցանց քվեարկելու իրավունք ունեցողների) գրանցումը, գրանցված օգտվողների կողմից սեփական կոդերի ներմուծումը, նրանց կողմից էլեկտրոնային քվեարկության իրականացումը, քվեարկության գաղտնիության ապահովումը, քվեարկության արդյունքների ամփոփումը, ելքային փաստաթղթի ձևավորումը, արդյունքների հրապարակման հնարավորությունը:

Նախագծվել, մշակվել և ներդրվել են համապետական ընտրությունների ժամանակ քվեարկության օրը ընտրատարածքներից էլեկտրոնային եղանակով ստացված տվյալների առցանց հրապարակման հնարավորություններ՝ գրաֆիկական և ըստ տեղամասերի աղյուսակավորման տեսքով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվական կենտրոնում և համացանցային կայքում, ինչպես նաև այդ տվյալները հեռուստաընկերություններին անմիջականորեն կենտրոնական ընտրական հանձնաժողովի ցանցից փոխանցման ծրագրա-տեխնիկական միջոցներ:

Նկարագրված համակարգչային ցանցը և նրանում ընդգրկված ծրագրա-տեխնիկական միջոցները փորձարկվել են՝ անվտանգության, անխափանության,

իրեն վերագրված գործառույթների ճիշտ և ժամանակին իրականացման առումներով, այնուհետև դրվել շահագործման:

2011 թվականի դեկտեմբերի 1-ին «IFA MLA» միջազգային կազմակերպության անդամ հանդիսացող անգլիական «Guardian Independent Certification Ltd (GIS)» ընկերության կողմից գնահատվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթները և ծրագրա-տեխնիկական միջոցները և շնորհվել ISO 27001:2005 «Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգի» և ISO 9001:2008 «Որակի» սերտիֆիկատներ, որոնք հավաստում են, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովի «Ընտրություններ» ավտոմատացված համակարգը՝ ներառյալ էլեկտրոնային քվեարկության համակարգը, համապատասխանում են միջազգայնորեն ընդունված և հաստատված ստանդարտներին:

դ) Ընտրողների ռեգիստր, ընտրողների ցուցակներ

Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ մարզերի և համայնքների: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի:

Նախկինում (2007 և 2008թ.թ.), Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած համապետական ընտրությունների ժամանակ, ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրելու իրավունք ունեցող անձանց թվաքանակի համեմատական վերլուծությունը ցույց էր տալիս, որ 2012 թվականին զգալիորեն աճել էր ընտրողների ռեգիստրում ընդգրկված քաղաքացիների թիվը:

Այսպես.

2007 թվականի մայիսի 12-ին կայացած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների ընտրողների ցուցակներում ընդգրկված են եղել 2.285.830 ընտրողներ, իսկ 8 ամիս անց, 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ՝ 2.311.917 ընտրողներ, այսինքն՝ 26.087-ով ավելի:

2012 թվականի փետրվարի 15-ի դրությամբ, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններից շուրջ 2,5 ամիս առաջ, ընտրողների ռեգիստրում ընդգրկված են եղել թվով 2.482.000 քաղաքացիներ, ինչը 170.083-ով ավելի է 2008 թվականի համապետական ընտրությունների ընտրողների ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թվից:

Ընտրողների ռեգիստրում քաղաքացիների թվի ավելացման պատճառները պարզելու նպատակով, 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած Հանրապետության Նախագահի ընտրությունների ընտրողների ցուցակները լիազոր մարմնի կողմից համեմատվել են 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք

(15.02.2012թ-ի դրությամբ) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների ընտրողների ցուցակների հետ:

Արդյունքում պարզվել է, որ 2008 թվականի փետրվարի 19-ի ընտրողների ռեգիստրում ընդգրկված, թվով **188.626** ընտրողներ չեն ընդգրկվել 2012 թվականի Ազգային ժողովի ընտրությունների ընտրողների ցուցակներում՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառումից հանվելու, այդ թվում՝ մահվան հիմքով (**122.434**):

Հանրապետության Նախագահի 2008 թվականի ընտրություններից հետո մինչև 2012 թվականի փետրվարի 15-ը ընտրողների ռեգիստրում ավելացվել է **359.614** ընտրողի տվյալ, որից **185.236**-ը՝ 18 տարին լրանալու հիմքով, իսկ **174.378-ը՝** բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու հիմքով:

Այսպիսով, ընտրողների ռեգիստրից դուրս եկած և նոր ընդգրկված ընտրողների թվի տարբերությունը կազմում է **170.988**:

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, որպես բնակչության պետական ռեգիստրը վարող մարմին, տարին 2 անգամ՝ հունիսին և նոյեմբերին (առաջին մեկ շաբաթվա ընթացքում), Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը՝ ըստ համայնքների, իսկ համապետական ընտրությունների դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ՝ նաև ըստ ընտրական տեղամասերի, էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի մշտական և անբաժանելի մասն է:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քվեարկության օրվանից 40 օր և 2 օր առաջ ընտրողների ցուցակը ներբեռնման հնարավորությամբ տեղադրվել է նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության կայքում:

Եթե քվեարկության օրվանից 40 օր առաջ հրապարակված ցուցակներում առկա են եղել որոշ անճշտություններ, ապա քվեարկության օրվանից 2 օր առաջ հրապարակված վերջնական ցուցակները գրեթե զերծ են եղել անճշտություններից: Ընտրողների ցուցակներում առկա անճշտությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը ստացել է 6.549 ստուգման ենթակա տվյալ: Ընդ որում՝ հիշյալ թվի կեսից ավելին՝ 3510-ը ձեռք են բերվել ոստիկանության նախաձեռնությամբ, 2957-ը՝ այլ սուբյեկտների:

Մասնավորապես՝ ընտրողների ցուցակներից հանվել է 3.840 մահացած անձի տվյալ, 5 անհատական տվյալ հանվել է, քանի որ անձինք բնակչության պետական

ռեգիստրում հաշվառում չեն ունեցել, շտկվել են 18 կրկնվող տվյալներ և սխալ հասցեներ: Ընտրողների ցուցակներում դուրս մնացած անձանց վերաբերյալ որևէ լրացում չի կատարվել, ուղղման ենթակա անճշտությունները 23-ից չեն անցել, այսպես կոչված «անճշտություններ»-ի վերաբերյալ մնացած բոլոր 2.686 տեղեկությունները հերքվել են, որոնց մասին դիմումատուները սահմանված կարգով իրազեկվել են:

Ընտրողների ցուցակներն իրենց վերջնական տեսքով ունեցել են ճշտության աննախադեպ բարձր մակարդակ: Դա են վկայում նաև քվեարկության օրը ընտրողների ցուցակների վերաբերյալ ստացված բողոքները (1 բողոք) և ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու մասին ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով ոստիկանության կողմից տրամադրված տեղեկանքների աննախադեպ ցածր թիվը: Քվեարկության օրը ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու մասին տեղեկանքները լիազոր մարմնի կողմից չտրամադրվելուց հետո դատարան է ներկայացվել 18 հայց, որից 9-ը բավարարվել է, 9-ը՝ մերժվել:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի կարևոր նորամուծություններից է ներբեռնման հնարավորությամբ ընտրողների ցուցակի տեղադրումը Հայաստանի Հանրապետության ոստիկանության կայքում, ավելին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու մասին լիազոր մարմին դիմում ներկայացնելու իրավունքը վերապահվել է յուրաքանչյուր անձի, ընդ որում՝ տրվել է օրենսդրական հնարավորություն ներկայացնելու անգամ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում: Նշված իրավական կարգավորումների արդյունքում ընտրողների ցուցակները ենթակա են եղել լիակատար վերահսկողության ընտրական գործընթացի մասնակից բոլոր սուբյեկտների և հասարակության կողմից:

ե) Թեկնածուների առաջադրումը, գրանցումը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով առաջադրվել էին 8 կուսակցություն և կուսակցությունների 1 դաշինք: Հանրապետության թվով 41 ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով առաջադրվել էին թվով 180 թեկնածուներ: Նշված թեկնածուներից 23-ը մինչև թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի սկիզբը՝ ներկայացրած գրանցման փաստաթղթերը ետ էին վերցրել:

Թեկնածուների գրանցումը կատարվել է սահմանված ժամկետներում: Ընտրություններին համամասնական ընտրակարգով առաջադրված 8 կուսակցությունները և կուսակցությունների 1 դաշինքը գրանցվել են: Համամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցող կուսակցությունների և

կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 1.026 թեկնածուներից մերժվել է միայն մեկ թեկնածուի գրանցում:

Մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներից մերժվել է 2 թեկնածուի գրանցում :

Մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներից մեկի գրանցումը մերժվել էր ներկայացված փաստաթղթերը թերի լինելու հիմքով՝ ընտրական գրավի գումարը չվճարելու պատճառաբանությամբ (ընտրատարածք թիվ 15), իսկ մեծամասնական ընտրակարգով առաջադրված մյուս թեկնածուի գրանցումը մերժվել է ընտրվելու իրավունք չունենալու հիմքով՝ հինգ տարվա մշտական բնակության պահանջը չբավարարելու պատճառաբանությամբ (ընտրատարածք թիվ 10): Ի դեպ նշված պատճառաբանությամբ է մերժվել նաև նույն թեկնածուի գրանցումը համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 108-րդ և 115-րդ հոդվածների համաձայն վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու վերաբերյալ տեղեկանքը տրամադրում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը: Նշված օրենսդրական պահանջի կիրառման վերաբերյալ լիազոր մարմնի իրավական դիրքորոշումները եղել են հստակ, կիրառվել են միատեսակ և ամրագրվել են տրված մերժումներում: Մասնավորապես, նույնական փաստական հանգամանքներով պայմանավորված լիազոր մարմինը մերժել է տեղեկանքի տրամադրումը հինգ քաղաքացիների:

Արդյունքում, հանրապետության թվով 41 ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով գրանցվել է 155 թեկնածու, որոնցից 18-ը մինչև քվեարկություն, սահմանված ժամկետում ներկայացրել են ինքնաբացարկի դիմում և քվեարկությանը մասնակցել է 137 թեկնածու: Նշված թեկնածուներից 53-ը եղել են անկուսակցական: 137 թեկնածուներից 49-ն առաջադրվել են ինքնաառաջադրման կարգով: Մեծամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցած թեկնածուներից 11-ը կանայք էին: Երկու ընտրատարածքում քվեարկությանը մասնակցել է մեկական թեկնածու, 7 ընտրատարածքում՝ երկուական, 12 ընտրատարածքում՝ երեքական, 16 ընտրատարածքում՝ չորսական, 3 ընտրատարածքում՝ հինգական և 1 ընտրատարածքում վեց թեկնածու: Թվով 41 մեծամասնական ընտրատարածքներից 39-ում քվեարկությանը մասնակցել է այլընտրանքային թեկնածու:

զ) Նախընտրական քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար

ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում սահմանված ժամկետներում հրապարակված են եղել՝

- նախընտրական միջոցառումների համար անվճար տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (ընդհանուր թիվը 783, այդ թվում՝ 55-ը Երևանում).

- քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված անվճար տեղերի ցանկը (ընդհանուր թվով 1127, այդ թվում՝ 825-ը Երևանում).

- հեռուստառադիոընկերությունների կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը:

Ըստ նախապես ներկայացված հայտերի կենտրոնական ընտրական հանձնաժողովը իրականացրել է հինգ քառակուսի մետրը գերազանցող արտաքին գովազդային վահանակների բաշխումը համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների միջև:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը:

Նախընտրական քարոզչության համար ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարված են եղել մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Նախընտրական քարոզչությունն ընթացել է ակտիվ, մրցակցային: Նախընտրական հավաքների, խոսքի և տեղաշարժվելու ազատության որևէ սահմանափակում չի արձանագրվել:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հաստատել և հրապարակել է «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից համապետական և Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու գնահատման մեթոդաբանությունը»:

2012 թվականի ապրիլի 8-ից մինչև մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից իրականացվել է

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող թվով 45 հեռուստաընկերությունների և 20 ռադիոընկերությունների վերգետնյա եթերային հեռարձակմամբ սփռված ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն: Նշված ժամանակահատվածում անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների ավելի քան 7.500 եթերաժամ:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ 17.04.2012թ., 27.04.2012թ. և 10.05.2012թ. հրապարակել և կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրական օրենսգրքի պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքներն ու հանձնաժողովի եզրակացությունը՝ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ: Մշտադիտարկման արդյունքներն ու հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվել են Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի համացանցային կայքում և կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Նախընտրական քարոզչության ընթացքում վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ չեն արձանագրվել:

Ընդհանուր առմամբ թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին հատկացվել է 1010.9 ժամ եթերաժամանակ, որից 831.5 ժամը՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին, 179.4 ժամը՝ մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող թեկնածուներին:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է եզրակացության, որ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից հատկացված եթերաժամանակը բավարարել է նախընտրական ծրագրերի ներկայացման, տեսակետների և դիրքորոշումների արտահայտման համար: Լրատվական թողարկումներով ընտրողների համար համակողմանի լուսաբանվել են նախընտրական քարոզարշավի միջոցառումները:

Այնուհանդերձ, եղել են եթերաժամանակի տրամադրման անհամաչափության առանձին դեպքեր: Նշվածը մասամբ պայմանավորված է թեկնածուների կողմից իրենց նախընտրական քարոզչության պլանավորման և իրականացման՝ միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման անհամասեռություններով, քարոզչության իրականացման, ինչպես նաև նրանց նախընտրական հիմնադրամներում առկա միջոցների, անվճար և վճարովի եթերաժամանակի օգտագործման, հեռուստառադիոծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամության առանձնահատկություններով, որը դրսևորվել է որպես օրինաչափություն բոլոր հեռուստառադիոընկերությունների եթերում: Այս հանգամանքով պայմանավորված եթերաժամանակի տրամադրման անհամաչափությունները Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հեռուստառադիոընկերությունների կողմից հավասար պայմանների խախտում չի գնահատել: Սակայն «Կենտրոն» և «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունների կողմից թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հատկացրած եթերաժամանակի անհամաչափությունները էականորեն գերազանցել են վերը նկարագրված ընդհանրությունները, որի պատճառով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից հարուցվել են վարչական վարույթներ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:

Ազգային ժողովի ընտրություններում համամասնական ընտրակարգով գրանցված 8 կուսակցությունները և կուսակցությունների 1 դաշինքը սահմանված կարգով բացել են նախընտրական հիմնադրամներ: Մեծամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցող 137 թեկնածուներից՝ նախընտրական հիմնադրամ են բացել 126-ը, իսկ հայտարարագիր ներկայացրել են՝ 125-ը: Թեկնածուներից 11-ը նախընտրական հիմնադրամ չեն բացել:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, ինչպես և պահանջվում է ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ թեկնածուներից, կուսակցություններից և կուսակցությունների դաշինքից ստացել է իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերում ամրագրված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագրեր, վճարման հանձնարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլ ֆինանսական փաստաթղթեր):

Միաժամանակ, վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և հիմնադրամներից կատարված ծախսերի վերաբերյալ, երեք աշխատանքային օրը մեկ, տեղեկանքներ է ստացել այն բանկերից, որտեղ բացված են եղել նախընտրական հիմնադրամներ:

Ուսումնասիրելով նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերին կից փաստաթղթերը, դրանց տվյալները համադրելով բանկերից ստացած տեղեկատվության հետ՝ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կազմել է ամփոփ տեղեկանք և հայտարարագրերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացրել կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը: Հանձնաժողովի նիստում քննարկվելուց և վերջինիս հավանությունն ստանալուց հետո, տեղեկանքը տեղադրվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկողական այս գործառույթն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում: Բացի այն, որ թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, բանկերից ստացած տեղեկանքները և վերջիններիս ուսումնասիրության արդյունքում վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմած ամփոփ տեղեկանքը հրապարակվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, առաջին անգամ, այդ գործընթացի նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն են ունեցել Ազգային ժողովում գործող խմբակցությունների կողմից նշանակված աուդիտորի որակավորում ունեցող մեկական աուդիտորներ: Պետք է նշել, որ գործող հինգ խմբակցություններից չորսը օգտվել են ընտրական օրենսգրքի ընձեռած այդ հնարավորությունից:

Այն, որ 2012 թվականի մայիսի 6-ի Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ իրականացվել է պատշաճ և արդյունավետ վերահսկողություն և, որ այդ գործընթացն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում, փաստվում է նաև այն հանգամանքով, որ նախընտրական քարոզչության փուլում կենտրոնական ընտրական հանձնաժողովը որևէ դիմում (բողոք) չի ստացել նախընտրական քարոզչության ֆինանսավորման սահմանված կարգի խախտումների վերաբերյալ:

Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված առանձին խախտումները վերաբերել են արգելված վայրերում քարոզչական պաստառներ փակցնելուն, բարեգործության առանձին դեպքերի կամ այլ մասնավոր դեպքերի, որը որևէ ազդեցություն չի ունեցել ընտրության արդյունքի վրա: Նշված դեպքերի վերաբերյալ ներկայացված դիմումները, ինչպես նաև զանգվածային լրատվության

միջոցներով ներկայացվող հաղորդումները կամ տեղեկությունները հանդիսացել են կենտրոնական ընտրական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ուսումնասիրման և քննարկման առարկա, այդ կապակցությամբ ընդունվել են որոշումներ, որոնցով պարտավորեցվել են իրավասու սուբյեկտներին վերացնել խախտումներն ու թերությունները, ինչն էլ կատարվել է համապատասխան սուբյեկտների կողմից:

Է) Քվեարկություն

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրությունների անցկացման նպատակով կազմավորվել են 1982 ընտրական տեղամասեր, որոնցից 7-ը՝ կալանավորված անձանց պահելու վայրերում: Քվեարկության օրը, առավոտյան ժամը 7.00-ին 1975 տեղամասային կենտրոններում կայացել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են տեղամասային կենտրոններն ու սկսվել է քվեարկությունը: Կալանավորված անձանց պահելու վայրերում կազմավորված տեղամասային կենտրոններից մեկը բացվել է առավոտյան ժամը 10.00-ին, իսկ մնացած 6 տեղամասային կենտրոնները բացվել են ժամը 17.00-ին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմում սահմանված կարգով նշանակված են եղել 13.874 քաղաքացիներ, որոնցից միայն 218-ը կամ 1.5% քվեարկության օրը չեն ներկայացել ընտրական տեղամաս և նրանցից 154-ի դեպքում թափուր տեղերը սահմանված կարգով լրացվել են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահների կողմից (չհամալրված հանձնաժողովներում նման օրենսդրական անհրաժեշտություն չի եղել):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակել ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչև ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ մարզերի (մարզում՝ նաև ըստ մարզկենտրոնների և մարզի՝ 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների) և Երևան քաղաքի հրապարակել է տեղեկություններ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք ըստ ընտրական տեղամասերի տեղադրվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Քվեարկությունն անցել է հանգիստ և խաղաղ մթնոլորտում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում»:

Քվեարկության օրն առավոտյան ժամը 8.30-8.45 սահմաններում կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվեցին ահազանգեր, թանաքանյութի շուտ անհետացման վերաբերյալ:

Անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված նյութը (հատուկ թանաքը) օգտագործվելուց հետո պետք է պահպանվեր առնվազն 12 ժամ: Նշված նյութը ձեռք էր բերվել մեծբրիտանական ընկերությունից, որը մասնագիտացված է ընտրական տեխնոլոգիաների ոլորտում, սակայն թանաքանյութի վերաբերյալ օրենսդրական պահանջը հանդիսանում էր նորամուծություն և նման նյութ երբևէ որևէ երկրում օգտագործված չի եղել: Նշված թանաքանյութը ստացվելու էր առաջին անգամ: Բազմաթիվ փորձանմուշներ էին ստացվել, փորձարկվել և շուտ գունաթափման երևույթ երբևէ նկատված չի եղել: Թանաքանյութը լինելով քիմիական ճանապարհով ստացված բաղադրություն, իր մեջ ներառում է մի քանի առանձին նյութերի խառնուրդ (ջուր, գլեցերին, թանաք) և ինչպես ցանկացած քիմիական նյութ բաղկացած է նյութից և լուծիչից՝ տվյալ դեպքում երկու լուծիչ, որոնք ունեն տարբեր մոլեկուլյար կշիռներ (ջուրը H2O=18, գլեցիրինը C3H3(OH)3=90) և հատուկ թանաքն իր իսկական հատկությամբ օգտագործելու համար անհրաժեշտ էր խառնել այն աստիճան, որպեսզի նրա մեջ ներառված թանաքանյութը, որը բարդ օրգանական նյութ է, և լուծիչը բավարար խառնվեին և հատուկ թանաքի բաղադրությունը դառնար միատար: Հատուկ նյութի օգտագործման նշված տեխնիկական պայմանն ապահոված ընտրական տեղամասերում այն պահպանել էր իր հատկությունը և առնվազն 12 ժամ չի վերափոխվել և հատուկ նյութով դրված դրոշմակնիքը առնվազն 12 ժամ եղել է տեսանելի: Այն ընտրական տեղամասերում, որտեղ չէր պահպանվել օգտագործման տեխնիկական պայմանը, առաջացել էր դրոշմակնիքի շուտ անհետացման հետ կապված խնդիր: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրը, ստանալով դրոշմակնիքների՝ սահմանված ժամկետից շուտ անհետանալու ահազանգը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթը՝ համաձայն որի. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ», անմիջապես արձագանքել է, և անհետաձգելիորեն լուծում է տվել օպերատիվ լուծում պահանջող այս խնդրին: Մասնավորապես, ընտրատարածքային ընտարական հանձնաժողովներին հրահանգավորվել էր տեղեկացնել տեղամասային ընտրական հանձնաժողովներին անձը հաստատող փաստաթղթում դրոշմակնիքումն իրականացնել այնպիսի թանաքով, որը չէր անհետանա:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ընտրողի անձը հաստատող փաստաթղթում դրոշմակնիքի շուտ վերափոխվելը և անհետանալը չէր կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա, քանզի թանաքի

կիրառումը ընդամենը լրացուցիչ միջոց էր մեկից ավելի անգամ քվեարկելը բացառելու համար:

Քվեարկության օրը հանրապետության 1982 ընտրական տեղամասերում միասին վերցրած ընտրական գործընթացին հետևել են համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) թվով 19.493 վստահված անձ, մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող թեկնածուների 10.121 վստահված անձ, ընտրական տեղամասեր են այցելել ընդհանուր թվով 25.102 դիտորդ, որոնցից 8.717-ը մասնակցել են արդյունքների ամփոփմանը:

Ի դեպ տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների միջև բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)՝ 903-ական,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)՝ 397-ական,

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ)՝ 352-ական,

«Օրինաց Երկիր» կուսակցություն (ՕԵԿ)՝ 176-ական,

«Ժառանգություն» կուսակցություն (ԺԿ)՝ 154-ական:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումն իրականացվել է «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով:

Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները բոլոր ընտրական տեղամասերում միասին ունեցել են 19.493 վստահված անձ՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն- 4.982 վստահված անձ, «Ժառանգություն» կուսակցություն – 949 վստահված անձ, Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք–2.234 վստահված անձ, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն–2.544 վստահված անձ, Հայաստանի դեմոկրատական կուսակցություն– 347 վստահված անձ, Հայաստանի կոմունիստական կուսակցություն – 583 վստահված անձ, Հայաստանի Հանրապետական կուսակցություն–4.767 վստահված անձ, «Միավորված հայեր» կուսակցություն–111 վստահված անձ, «Օրինաց երկիր» կուսակցություն – 2.976 վստահված անձ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վստահված անձանց իրավունքների իրականացմանը խոչընդոտելու կամ վերջիններիս լիազորությունները սահմանափակելու վերաբերյալ դիմումներ չեն ստացվել: Քվեարկության օրը եղել են որոշ ահազանգեր, որոնք ստուգման արդյունքում հերքվել են: Վստահված անձանց կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառում կատարելն արգելելու մասին ևս որևէ բողոք ընտրատարածքային

ընտրական հանձնաժողովները չեն ստացել: Գործնականում, սակայն չի բացառվում, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներում, հանձնաժողովների անդամների և վստահված անձանց միջև եղած լինեն տարաձայնություններ, կոնֆլիկտային իրավիճակներ՝ ընտրական օրենսգրքի տարբեր դրույթների բովանդակության կամ դրանց կիրառման վերաբերյալ, որոնք հենց տեղում հարթված լինեն: Տեղամասային ընտրական հանձնաժողովներն աշխատել են մեծ ծանրաբեռնվածությամբ, նաև ընտրողների ակտիվության պատճառով երբեմն առաջացել են հերթեր, սակայն չի գրանցվել որևէ դեպք, որ այդ պատճառով խոչընդոտվի ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և որևէ ընտրող այդ պատճառով զրկվի ընտրական իրավունքից:

ը) Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են բոլոր 1982 ընտրական տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները, ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 10 ժամվա ընթացքում, ավարտել են թե՛ համամասնական և թե՛ մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների ամփոփումը:

Հարկ է նկատել, որ ընտրական տեղամասերում մեկ քվեարկության արդյունքների ամփոփման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում միաժամանակ ամփոփվել է երկու քվեարկության արդյունք, ինչի պատճառով տեղամասային ընտրական հանձնաժողովներն աշխատել են գերծանրաբեռնված:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը, ժամը՝ 00.00-ից սկսած իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի՝ իր պաշտոնական կայքում հրապարակելով համամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքներն՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքով ռեալ ժամանակի մեջ հնարավոր էր հետևել ընտրության արդյունքների ամփոփմանը՝ ստանալով յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները: Ընտրության արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ: Ընտրական տեղամասերի 98%-ից ավելիում վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները տեսանկարահանել են քվեարկության արդյունքների ամփոփման ողջ գործընթացը:

Առկա չէ որևէ բողոք կամ նույնիսկ ահանգանգ, որ տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց չի

տրվել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով: Ի դեպ, առկա չէ թեկուզև մեկ դեպք, երբ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները տարբերվեն կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված տվյալներից:

թ) Քվեարկության արդյունքների վերահաշվարկ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը:

Վերահաշվարկ կատարելու դիմում ներկայացանելու իրավունք ունեն թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում: Իրավանորմով նման սուբյեկտային կազմի սահմանումը չի կրում ինքնանպատակ բնույթ: Վերահաշվարկի դիմում ներկայացնելու իրավունքից օգտվում են ընտրական գործընթացի այն մասնակիցները, ովքեր ունեն ուղղակի սուբյեկտիվ շահեր, մասնակացել են, ներկա են գտնվել տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, արձանագրել են իրենց կարծիքով թույլ տրված խախտումները, նկատել են սխալ իրականացված հաշվարկը և այլն: Այսինքն, դիմում ներկայացնող անձն արդեն իսկ ունի լիակատար պատկերացում տեղամասում իրականացված հաշվարկի վերաբերյալ և վերահաշվարկի միջոցով, ըստ էության, նպատակ է հետապնդում արձանագրելու այդ խախտումները:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում ներկայացնելու համար օրենքը սահմանել է հստակ ժամկետ՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն: Վերահաշվարկի դիմումի համար սահմանված են տարրական, պարզագույն պահանջներ:

Ընդհանուր առմամբ համամասնական ընտրակարգով իրականացվել է 11 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կամ որ նույնն է ընդհանուր ընտրական տեղամասերի 0,55 տոկոսում, որից 3-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախաձեռնությամբ, 8-ը համապատասխան դիմումների հիման վրա, որոնցից 2-ը ներկայացվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից, 6-ը տեղամասում ներկա գտնված վստահված անձանց կողմից:

Ուշագրավ է, որ համամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 1007 թեկնածուներից որևէ մեկը դիմում չի ներկայացրել վերահաշվարկ կատարելու մասին, չնայած այն հանգամանքին, որ հենց կենտրոնական ընտրական հանձնաժողովը տվել էր պաշտոնական պարզաբանում, որ համամասնական ցուցակի թեկնածուն կարող է ներկա գտնվել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին: Ուշագրավ է նաև, այն հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության օրն աշխատած 13.810 հանձնաժողովի անդամներից միայն 17-ը կամ որ նույնն է 0.12%-ն են կատարել գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

Վերահաշվարկի աշխատանքները բոլոր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում իրականացվել է բաց, թափանցիկ, բոլոր նրանք ովքեր ցանկություն են ունեցել ներկա գտնվել վերահաշվարկին, նրանց հնարավորություն է տրվել ներկա գտնվելու և ազատորեն ծանոթանալու քվեարկված քվեաթերթիկներին, սահմանված նմուշի ծրարներին, մարված քվեաթերթիկներին, ընտրողների ստորագրած ցուցակներին և այլն:

Ի դեպ իրականացված վերահաշվարկի արդյունքում թվով վեց ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալներն ընդհանրապես չեն փոփոխվել, իսկ հինգ ընտրական տեղամասերի արդյունքները կրել են աննշան փոփոխություններ:

Ժ) Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն.

«Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել միայն քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն»: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն, եթե բողոքի կամ դիմումի քննարկման արդյունքով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, իսկ խախտումը արտահայտված չէ անճշտություններում, ապա այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերը ուղարկվում են դատախազություն:

Ընտրական տեղամասում համամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներ ներկայացվել են թվով 41 ընտրատարածքներից միայն 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում: Ընդհանուր առմամբ ներկայացվել է այդպիսի 6 դիմում, որոնք վերաբերվել են ընդամենը թվով՝ 10 ընտրական տեղամասերի կամ որ նույնն է ընտրական տեղամասերի ընդհանուր թվի 0.5%-ին:

Թիվ 1 ընտարատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է մեկ դիմում 1/34 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին: Թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սահմանված կարգով և ժամկետներում քննել է դիմումը և կայացրել որոշում դիմումի մերժման մասին, որը չի բողոքարկվել ոչ կենտրոնական ընտրական հանձնաժողով, և ոչ էլ վարչական դատարան:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է մեկ դիմում 14/6, 14/10, 14/11, 14/20, 14/21, 14/22 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով: Դիմումը ստորագրվել է մեկ վստահված անձի կողմից, որը չի գտնվել դիմում նշված ընտրական տեղամասերից և ոչ մեկում: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սահմանված կարգով և ժամկետներում քննել է դիմումը և կայացրել որոշում դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին, ոչ իրավասու անձի կողմից ներկայացնելու հիմքով: Որոշումը վարչական կամ դատական կարգով չի բողոքարկվել:

Թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է ներկայացվել 4 դիմում, որոնցով պահանջվել է անվավեր ճանաչել թիվ 17/10, 17/11, 17/27 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները: Թիվ 17/27 տեղամասի արդյունքներին վերաբերող դիմումը ներկայացվել է ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ: Թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սահմանված կարգով և ժամկետներում քննել է բոլոր դիմումները և կայացրել որոշումներ, որոնցով 17/10 և 17/11 տեղամասերի վերաբերյալ պահանջը մերժվել է, իսկ 17/27 տեղամասին վերաբերող դիմումով մերժվել է վարչական վարույթի հարուցումը՝ դիմումն ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու հիմքով: Այս որոշումները բողոքարկվել են կենտրոնական ընտրական հանձնաժողով, պահանջով՝ անվավեր ճանաչել դրանք, և միևնույն ժամանակ պահանջվել էր կենտրոնական ընտրական հանձնաժողովից անվավեր ճանաչել թիվ 17/7, 17/10, 17,11, 17/27 տեղամասերի քվեարկության արդյունքները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրելով դիմում-բողոքով բերված հիմնավորումները և թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կայացրել է որոշում դիմումի մերժման մասին:

Այսպիսով, ընտրական տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին ներկայացված ընդամենը 6 դիմումներից մեկը՝ ներկայացվել է

նման իրավունք չունեցող անձի կողմից, երկուսը՝ ներկայացվել են սահմանված ժամկետից ուշ, իսկ երեք դիմում համարվել են անհիմն ու մերժվել: Չնայած, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ընդունած համապատասխան որոշումներից միայն թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումներն են բողոքարկվել կենտրոնական ընտրական հանձնաժողով, այնուամենայնիվ, կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես համամասնական ընտրակարգին վերաբերող որոշումներ, մանրամասն ուսումնասիրել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների բոլոր որոշումները: Հարկ է նշել, որ դիմումատուների կողմից ներկայացված դիմումները ոչ միայն չեն պարունակել համապատասխան հիմնավորումներ, այլև դրանցում վկայակոչված դատողությունները կամ գրեթե չեն առնչվել քվեարկության արդյունքին կամ վկայակոչվել են քվեարկության օրվա ընթացքում տեղի ունեցած ինչ որ եզակի դեպքեր:

Ժա) Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում խախտումների վերաբերյալ գրառումներ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում»:

Միայն 205 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել գրառումներ, իսկ 1777 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ: Ներկայացված գրառումները վերաբերել են քվեարկության օրն արձանագրված մասնավոր դեպքերի, որոնց մի մասը գրառում կատարող անձանց տեսակետներն են և ընդհանրապես չեն հանդիսանում ընտարախախտում: Ընդհանուր գրառումների 63%-ը համընկնում է և վերաբերում մեկ հանգամանքի՝ դրոշմակնիքի համար կիրառվող թանաքանյութին: Ի դեպ նշված բոլոր գրառումները մանրամասն քննարկման առարկա են դարձել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից և վերջիններիս կողմից կայացվել են որոշումներ գրանցամատյաններում արձանագրված խախտումների վերաբերյալ:

Ժբ) Դիմում բողոքների քննարկում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենգրքի 45-47 հոդվածները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սկզբունքներին համապատասխան և ընտրական հարաբերությունների առանձնահատկությունների հաշվառմամբ մանրամասն

կանոնակարգում են հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգն ու պայմանները:

2012 թվականի մայիսի 6-ի ընտրությունների նշանակումից՝ 2012 թվականի փետրվարի 24-ից հետո, մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ընդունվելու օրը՝ 2012 թվականի մայիսի 13-ը, կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է 537 դիմում (բողոք), որոնցից 482-ը՝ ներկայացվել է մեկ դիմումատուի կողմից: Մնացած 55 դիմումներում առկա են եղել ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրակարգով ընտրություններին վերաբերող դիմումներ: Ի դեպ, նշված 482 դիմումներով չնայած դիմումատու քաղաքացին չի հանդիսացել համապատասխան դիմումները ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, այդուհանդերձ մերժելով վարչական վարույթի հարուցումը, կենտրոնական ընտրական հանձնաժողովը 369 դիմումներում ներկայացված փաստերը դիտարկել է որպես հաղորդումներ և սեփական նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթներ, ի պաշտոնե ձեռք բերել ապացույցներ և կայացրել համապատասխան որոշումներ: Բազմաթիվ դիմումներ կրկնել են մեկը մյուսին, նույն փաստական հանգամանքի վերաբերյալ ներկայացվել են անգամ մեկ տասնյակից ավելի դիմումներ, որով պայմանավորված նշված դիմումները քննարկվել են մեկ վարույթի շրջանակներում և մի քանի դիմումների քննությամբ ընդունվել է մեկ որոշում:

Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող 8 կուսակցությունների և կուսակցությունների 1 դաշինքի կողմից կենտրոնական ընտրական հանձնաժողովին է ներկայացվել ընդամենը՝ 10 դիմում, և 25 դիմում՝ 2 հասարակական կազմակերպությունից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են նաև 7 գրություններ, որոնցով պահանջվել են տալ պարզաբանումներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունվել է 7 որոշում, որոնցով տրվել է պաշտոնական պարզաբանումներ:

Ներկայացված բոլոր դիմումները Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից քննարկվել են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 45-47-րդ հոդվածների պահանջներին համապատասխան: Դիմումների քննարկման օրվա և ժամի մասին դիմումատուները եղել են պատշաճ ծանուցված, իսկ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները՝ սահմանված կարգով ուղարկվել են դիմումատուներին և հրապարակվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Դիմումատուները եզակի դեպքերում են ներկայացել իրենց դիմումների քննարկմանը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ ներկայացել են՝ ապահովվել է վերջիններիս լսվելու իրավունքը:

Այսպիսով, կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացված դիմումների վերաբերյալ կայացրել է 126 որոշում, որոնցից՝

- **22 որոշում** ընդունվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների վերաբերյալ,

- **70 որոշմամբ** մերժվել է վարչական վարույթի հարուցումը,

- **12 որոշմամբ** ներկայացված դիմումով վարչական վարույթը կարճվել է,

- **22 որոշում** ընդունվել է դիմումատուների դիմումների քննարկման արդյունքներով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ»: Զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր համացանցային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկությունները օպերատիվ կարգով ճշգրտվել են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ: Քվեարկության օրը կենտրոնական ընտրական հանձնաժողովն օպերատիվ կարգով արձագանքել է elections.aravot.am կայքում տեղ գտած հաղորդումներին, ստուգվել են հրապարակվող փաստական հանգամանքները և տրվել մեկնաբանություններ: Մեկնաբանությունները ներկայացվել են նշված կայքում զետեղված տեղեկությունների վերաբերյալ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կայքում զետեղվում էր նաև նմանատիպ այլ կայքերի տեղեկատվությունը (iditord.org, mynews.am, 1in.am, aravot.am և այլն):

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ համացանցային կայքերում և այլ լրատվական միջոցներով, ոստիկանությունում գործող բազմուղի թեժ գծով ստացված տեղեկություններով և դատախազության մարմիններից ստացված հաղորդումներով Հայաստանի Հանրապետության ոստիկանութան տարածքային ստորաբաժանումներում նախապատրաստվել են 197 նյութեր, որոնք կապված են եղել ընտրակաշառքների, մեկ այլ անձի փոխարեն քվեարկելու, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների աշխատանքների խոչընդոտմանը, ընտրողների կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելուն և այլ բնույթի խախտումների հետ:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից նախապատրաստված նյութերով հարուցվել են 15 քրեական գործեր, որոնցից 11-ը՝ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում, իսկ 4-ը՝ ոստիկանության քննչական ապարատում:

Նշված բոլոր դեպքերով ոստիկանության ստորաբաժանումների կողմից կատարվել և կատարվում են քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ:

Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դատախազությունում ստացվել է 216 հաղորդում, այդ թվում՝ 90 հաղորդում լրատվամիջոցներում զետեղված հրապարակումներում: Դրանցից 11 հաղորդում ուղարկվել է ըստ ենթակայության՝ իրավասու պետական մարմինների քննարկմանը, 8-ին տրվել է պարզաբանում, 15-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին, 200-ով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին, իսկ 3 հաղորդումների քննարկումն ընթացքում է:

Հարուցված 15 քրեական գործերից՝ 2-ով որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին, 2-ով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 11-ով նախաքննությունը շարունակվում է:

ժգ) Դատարան ներկայացված հայցադիմումները և դրանց քննությունը

Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքների խախտման վերաբերյալ Վարչական դատարանում մուտքագրվել է 21 հայցադիմում: Վարչական դատարանն ըստ էության քննել է 7 վարչական գործ, իսկ մնացած 14 հայցադիմումներից 10-ի ընդունումը մերժվել է, 3-ը վերադարձվել և 1 հայցադիմումի ընդունումը մասով մերժվել է, մասով վերադարձվել: Ներկայացված 21 հայցադիմումները ներկայացվել են հետևյալ անձանց կողմից.

1. **յոթ** հայցադիմում ներկայացվել է միևնույն անձի՝ քաղաքացի Թորոսյանի կողմից (ՎԴ/2488/05/12, 2487/05/12, 2483/05/12, ՎԴ/2616/05/12, ՎԴ/1783/05/12, ՎԴ/2616/05/12, ՎԴ/1785/05/12), որոնցից 3 հայցադիմումներ վերադարձվել են, իսկ թվով 4 հայցադիմումների ընդունումը մերժվել է.

2. **երեք** հայցադիմում՝ որպես պատգամավորության թեկնածու առաջադրված, սակայն գրանցումը մերժված քաղաքացի Սուքիասյանի կողմից (ՎԴ/2242/05/12, 2329/05/12, 2390/05/12), որոնցից 1-ի ընդունումը մերժվել է, իսկ 2-ն ընդունվել են վարույթ և հայցերը մերժվել են.

3. **երկու** հայցադիմում՝ Հայ Ազգային Կոնգրես կուսակցությունների դաշինքի կողմից (ՎԴ/3052/05/12, 2973/05/12), որոնց ընդունումը մերժվել է.

4. **երկու** հայցադիմում՝ թիվ 37 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Հարությունյանի կողմից (ՎԴ/2325/05/12, 2182/05/12), որոնցից մեկի ընդունումը մերժվել է, իսկ մյուսն ընդունվել է վարույթ և հայցը մերժվել է.

5. **երկու** հայցադիմում՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ հասարակական կազմակերպության և նրա նախագահ Սաքունցի կողմից

(ՎԴ/1831/05/12, 2944/05/12), որոնցից առաջինի ընդունումը մերժվել է, իսկ երկրորդն ընդունվել է վարույթ և հայցը մերժվել է.

6. **<u>մեկական</u>** հայցադիմում՝ թիվ 23 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ջհանգիրյանի (ՎԴ/2850/05/12), թիվ 19 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Հակոբյանի (ՎԴ/2328/05/12) և թիվ 11 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Բանուչյանի (ՎԴ3101/05/12) կողմից, որոնք ընդունվել են վարույթ և հայցադիմումները մերժվել են.

7. **<u>մեկական</u>** հայցադիմում՝ թիվ 7 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի (ՎԴ/2597/05/12) և թիվ 2 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Վլադիմիր Կարապետյանի (ՎԴ2898/05/12) կողմից, որոնց ընդունումը մերժվել է:

Քվեարկության օրը ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու մասին տեղեկանքները ոստիկանության կողմից չտրամադրվելուց հետո ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 18 հայց, որից 9-ը բավարարվել է, 9-ը՝ մերժվել:

ժդ) Ընտրությունների արդյունքների բողոքարկում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինքի կողմից վիճարկվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» թիվ 265-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴՈ-1028 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի թիվ 265-Ա որոշումը թողնվել է ուժի մեջ:

Մեծամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցած պատգամավորի թեկնածուների կողմից վիճարկվել են թվով վեց ընտրատարածքների (թիվ 3, 7, 9 17, 37, 38) մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների պատգամավոր ընտրվելու մասին որոշումները:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից վիաճարկվող բոլոր որոշումները թողնվել են ուժի մեջ:

Առաջարկվող օրենսդրական փոփոխություններ

Հայաստանի Հանրապետության նոր ընտրական օրենսգիրքն էական առաջընթաց արձանագրեց ընտրական իրավահարաբերությունների կարգավորման բնագավառում, այնուամենայնիվ ընտրական օրենսգրքի պրակտիկ կիրարկումը ցույց տվեց, որ ընտրական գործընթացը կարգավորող առանձին նորմեր և ինստիտուտներ ունեն կատարելագործման անհրաժեշտություն:

Այսպես՝

ա) Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով բացում են նախընտրական հիմնադրամ»: Հարցը հետևյալն է. այն թեկնածուները, ովքեր ընտրում են նախընտրական քարոզչության այնպիսի ռազմավարություն, որը չի ենթադրում ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քարոզչական ծախսերի կատարում, պարտավոր են արդյո՞ք բացել նախընտրական հիմնադրամ, թե՝ ոչ: Նշված հարցն ունի օրենսդրական հստակեցման անհրաժեշտություն: Եթե օրենսդրության հստակեցման արդյունքում հիմնադրամի բացումը կսահմանվի որպես դիսպոզիտիվ պահանջ, ապա առաջարկվում է որպեսզի կատարվի համապատասխան օրենսդրական փոփոխություն, որը կպարտադրի բոլոր թեկնածուներին հիմնադրամ չբացելու դեպքում իրազեկել համապատասխան ընտրական հանձնաժողովին:

բ) Գործող ընտրական օրենսգրքում լուծված չէ նաև թեկնածուների նախընտրական հիմնադրամները սպասարկող ժամանակավոր հատուկ հաշվեհամարների վրա կալանք դնելու կամ չդնելու հարցը: Քանի որ թեկնածուի նախընտրական հիմնադրամը ձևավորվում է ոչ միայն թեկնածուի մուծումներից, այլ նաև նրան առաջադրած կուսակցության և ընտրելու իրավունք ունեցող ֆիզիկական անձանց մուծումներից, ուստի վերջիններիս կողմից իրենց նախընտրած թեկնածուի նախընտրական քարոզչությանն աջակցելու նպատակով, նրա նախընտրական հիմնադրամ մուծված գումարներով մարել թեկնածուի՝ մինչև թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելը և ընտրությունների հետ չկապված քաղաքացիաիրավական պարտավորությունները, մեր կարծիքով անտրամաբանական է: Այստեղ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ մինչև թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելը գոյացած քաղաքացիաիրավական պարտավորությունները մարելիս թեկնածուն պատասխանատու է իր անձնական գույքով: Այսինքն, եթե նույնիսկ անհրաժեշտ է կալանք դնել այդ հաշվի վրա, ապա այն պետք է դրվի հաշվի այն մասի վրա, որը ձևավորվում է թեկնածուի անձնական միջոցներից կամ ամրագրվի համապատասխան պահանջ արգելելով նման հաշիվների վրա կալանք դնելու հնարավորությունը:

գ) Գործող ընտրական օրենսգիրքը չի պատասխանում նաև այն հարցին, թե պատասխանատվության ի՞նչ միջոց պետք է կիրառվի կամ պե՞տք է կիրառվի

ընդհանրապես, թե ոչ այն թեկնածուի, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքների նկատմամբ, որոնց պայմանագրային պարտավորությունները քվեարկության օրվանից հետո գերազանցում են հիմնադրամում առկա մնացորդը: Միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական հստակեցում:

դ) Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն.

«Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամը քվեարկության ծրարը կնքում և քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու հնարավորություն է ընձեռում միայն ընտրողի անձը հաստատող փաստաթղթում տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայությունը ստուգելուց և դրա բացակայության դեպքում անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելուց հետո:

Անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում»:

Անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար նախատեսված նյութն իրենից ներկայացնում է ըստ էության քիմիական խառը բաղադրությամբ լուծույթ, որը պետք է օժտված լինի խիստ յուրօրինակ հատկությամբ՝ պահպանվել առնվազն 12 ժամ և հետագայում անհետանալ: Նշվածը ընտրական օրենսգրքի նորամուծությունն էր, և ինչպես նշվեց նման հատկություններով նյութ որևէ երկրում չի օգտագործվել, նշված նյութ որևէ կազմակերպության կողմից նախկինում պատրաստված և օգտագործված չի եղել, և այս առումով նման նյութը մեզանում կիրառվում էր առաջին անգամ: Նյութի կիրառման ընթացքում պարզվեց, որ նշված նյութը, որը բազմաթիվ անգամներ փորձարկվել էր, այդուհանդերձ քվեարկության օրն առաջացրեց որոշակի խնդիրներ, եղան դեպքեր նույն նյութի 12 ժամից ավելի շուտ և ավելի ուշ գունազրկվելու դեպքեր:

Նյութի նման, ի դեպ ոչ թե «անհետացումը» (ընտրական օրենսգրքի դրույթը սխալ է, քանզի որևէ նյութ չի կարող անհետանալ), այլ «գունաթափումը» կամ «գունազրկումը» քիմիական ռեակցիայի արդյունք է: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բազմաթիվ են իրավիճակները, քիմիական ռեակցիայի վրա ազդող հանգամանքները (մթնոլորտային տարբեր պայմաններ, դրոշմակնքված անձնագրի պահպանման պայմաններ), ապա տեսականորեն անգամ, ինչպես նշում են մասնագետները, անհնար է ստանալ միասնական նյութ, որը գունաթափման նույնական պայմաններ կապահովի բոլոր իրավիճակների ու հանգամանքների համար:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով ամրագրված դրույթներով մեկից ավելի անգամ քվեարկելը բացառելու ավելի առանցքային

հնարավորություններ են ամրագրված, մասնավորապես՝ ընտրական ցուցակների կազմման, վարման, դրանց հրապարակայնության, ընտրական տեղամասում ընտրողների ցուցակում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տվյալների գրանցման կանոնակարգումները: Նշված բոլոր գործառույթներն իրականացվում են ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար բաց և վերահսկելի պայմաններում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամն ստուգում է ընտրողի ինքնությունը, ընտրողների ցուցակում գտնում է նրա անուն-ազգանունը, դրա դիմացի դատարկ սյունակում լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները, և ընտրողը ստորագրում է այդ տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում: Ընտրողի գրանցումն իրականացնող անդամն իր անհատական կնիքն է դնում ընտրողի ստորագրության դիմաց՝ համապատասխան սյունակում»:

Նշված իրավանորմից ակնհայտ է, որ եթե ընտրողը գալիս է ընտրական տեղամաս, ապա առաջին գործողությունը գրանցման համար պատասխանատու անդամի կողմից ընտրողի ինքնությունը ստուգելն է, որով պարզվում է տվյալ ընտրողի՝ այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված լինելու հանգամանքը: Նշված գործողության կատարումից հետո ցուցակում ընտրողի անուն-ազգանունի դիմացի դատարկ սյունակում լրացվում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները, որից հետո ընտրողը ստորագրում է այդ տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, այնուհետև գրանցումն իրականացնող անդամն իր անհատական կնիքն է դնում ընտրողի ստորագրության դիմաց՝ համապատասխան սյունակում: ՀՀ ընտրական օրենսգրքով 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ընտրողների գրանցման և ընտրողներին քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամների աշխատատեղերից յուրաքանչյուրի միջև նախատեսվում է առնվազն մեկ աշխատատեղ վստահված անձի համար, որը լիարժեք հնարավորություն է տալիս այս գործընթացը վերահսկելու համար:

Վերոգրյալով պայմանավորված առաջարկվում է ընտրական օրենսգրքից հանել ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը դրոշմակնքելու ինստիտուտը:

ե) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով կաշառք ստանալու, ինչպես նաև կաշառք տալու համար:

Որպես ընտրակաշառքի դեմ պայքարի արդյունվետ միջոց առաջարկվում է, որպեսզի նախատեսվի կանոնակարգում, ըստ որի ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդում ներկայացնողներն ազատվեն քրեական պատասխանատվությունից:

զ) առաջարկվում է նաև մանրամասն ուսումնասիրել դիտորդական առաքելությունների կողմից ներկայացված եզրակացություններում առկա առաջարկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 6-ի պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով կայացված որոշումներում ներկայացված իրավական դիրքորոշումները և ըստ անհրաժեշտության կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ: